ԳՐԱԲԱՐԻ ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայերենի դերբայները շարահյուսական մակարդակում բաժանվում են կախյալ և անկախ խմբերի[1]։ Ինչպես ժամանակակից հայերենում, գրաբարում ևս անորոշ դերբայն իր բնույթով անկախ է (օժանդակ բայի հետ դիմա-թվային հարացույց չի կազմում) և, բնական է, որ պարզ ստորոգյալ ձևավորել չի կարող։ Որպես շարահյուսական անկախ իրողություն, գրաբարյան անորոշ դերբայը նախադասության մեջ կարող է կատարել՝ ա) ենթակայի [«Եւ ի զուր է ճառարտակէն նոցա» (Եզն., 214), «Զար և դառն եղև քեզ թողուլն զիս» (Ագաթ., 150)], բ) նրպատակի պարագայի [«Առաքէ հրեշտակս առ Արայն Գեղեցիկ՝ ...բաղում աղաչանօք և խոստմամբ պարգևաց՝ զալ առ նա ի Նինուէ, կամ առեալ կնութեան և թագաւորել և կամ կատարել զկամս ցանկութեան նորա» (ՄԽՊՀ, 48—49)], գ) ուղիղ խնդրի [«Իսկ նոքա խնդրէին ի կամարար Տեառնէն ասյրեցուցանել զնոսա յանօրէն յանարժան հարսանեացն պղծութենէն» (Ագաթ., 95), «Պէս-պէս պարգևս ասել թոստանայր» (ՄԽՊՀ, 211)] և բազմաթիվ այլ գործառույթներ։ Հարկ է նշել, սակայն, որ գրաբարյան անորոշ դերբայով արտահայտված ուղիղ խնդիրն իր որոշ կիրառությունների մեջ կորցնում է անկախությունը և հանդես է գալիս եղանակայնության կատեգորիան (категория модальности)[2] *ներկայացնող մի շարք բայերի (իշխել, խորհել, յանձն առնուլ, շանալ և այլն) դիմավոր ձևերի հետ։ Այդպիսի կառույցների մեջ «կերպա-եղանակային իմաստներն արտահայտվում են դիմավոր բայաձևի միջոցով, իսկ բուն հատկանշա-ստորոգելիական իմաստն արտահայտվում է անորոշ դերբայի միջոցով»[3]։ Այսպես՝ «Ցայտնեալ է ստուգապէս, թէ աստուածոցն ցասուցեալ՝ չկամեցան զիւրեանս բարութիւնսն ծանուցանել անմտացն» (ՂՓՊՀ, 40) նախադասության ընդգծված ստորոգյալի առաջին բաղադրիչը (չկամեցան) ունի եղանակիչի արժեք և սոսկ եղանակավորում է անորոշ դերբայի միջոցով արտահայտված հատկանիշը։ Սա նշանակում է, որ գրաբարում անորոշ դերբայը կարող է հանդես գալ նաև «բարդ ստորոգյալի»[4] կազմում՝ դառնալով տվյալ բարդության հիմնական իմաստակիր բաղադրիչը։*

Այս ամենից բացի, գրաբարում կան նախադասություններ, որոնց գլխավոր անդամն արտահայտվում է անորոշ դերբայով։ Այսպես՝ «Եւ եդեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յառակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով, թէ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատս, իմանալ զբանս հանճարոյ» (Կոր., 50) կառույցի ընդգծված նախադասությունների մեջ որպես գլխավոր անդամ հանդես է գալիս միայն անորոշ դերբայը (ճանաչել, իմանալ). այլ կերպ ասած, ընդգծված նախադասություններն անդեմ են։ Անդեմ կոչվում են բայական այն միակազմ նախադասությունները, որոնց ենթական չկա և չի վերականգնվում, իսկ ստորոգումն արտահայտված է «միմիայն անորոշ դերբայով»[5]։

Անդրադառնալով ժամանակակից հայերենի միակազմ նախադասություններին, Գ. Ջահուկյանը գտնում է, որ «Մոռանա՜լ, մոռանա՜լ ամեն ինչ, Ամենի՛ն մոռանալ» (Վ. Տ.)[6], տիպի նախադասությունները «պետք է համարել անվանական նախադասությունների մի տեսակ և դնել փոխակերպման մեջ (կրկնակի փոխակերպում՝ դիմավոր ձևի գործառական փոխակեր-

---

[1] *Տե՛ս է դ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 345, և ուրիշներ։*

[2] *Ալ. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 377։*

[3] *Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 403։*

[4] *Նույն տեղում, էջ 404։*

[5] *Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Երևան, 1964, էջ 38։*

[6] *Գ. Ջահուկյան, Նշվ. աշխ., էջ 394։*

պում՝ գոյականացում և վերջինիս ստորոգական փոխակերպում՝ վերածում նախադասության)»7։ Նախ ասենք, որ անորոշ դերբայով արտահայտված միակազմ նախադասությունները բայական պետք է համարել, նկատի ունենալով հենց միայն այն հանգամանքը, որ հոլովման դեպքում նույնիսկ «որպես խոսքի մաս անորոշը մնում է իբրև բայ»8։ Բացի այդ, թեև «Ճանաչել զիմաստութիւն և դիտատ» տիպի նախադասությունները անվանականների նման «չունեն ոչ ենթակա և ոչ ստորոգյալ»9, այնուամենայնիվ անվանական անդեմ նախադասություններից ունեն որոշակի տարբերություններ՝ ա) բայական անդեմ նախադասություններն անվանում են գործողություն և ոչ թե առարկա կամ երևույթ, բ) էական բայ-հանգույցի կարիք չի զգացվում սրանց նաև բովանդակության պլանում, մի բան, որ չենք կարող ասել անվանական անդեմ նախադասությունների բովանդակության պլանի մասին [հմմտ. «Լոե՛լ», բայց՝ «Գարուն (է)»], գ) բայական անդեմ նախադասությունների մեջ արտահայտվում է գործողության կատարման ուղղվածություն, դ) եթե բայական անդեմ նախադասությունների բովանդակության պլանում անորոշ դերբայի արտահայտած հատկանիշը ենթադրում է ենթակա, ապա անվանական նախադասությունների գլխավոր անդամը ենթադրում է էական բայ-ստորոգյալ և այլն։

Բայական անդեմ նախադասությունների բովանդակության պլանում առկա է ստորոգման երևույթը, որն իրականանում է հնչերանգի միջոցով։ Այլ կերպ ասած, բայական անդեմ նախադասությունների «հնչերանգը ստորոգող քերականական ձևի դեր է կատարում»10։ Չեզոք հնչերանգով բայական անդեմ նախադասություններ չեն կարող լինել, հակառակ դեպքում դրանք կլինեն ոչ թե նախադասություններ, այլ՝ բառային միավորներ (եթե արտահայտված են միայն անորոշ դերբայով) կամ բառակապակցություններ (եթե արտահայտված են անորոշ դերբայով և նրա լրացումներով)։

Բայական անդեմ բոլոր նախադասությունների մեջ գլխավոր անդամի կամ նրա որևէ լրացման միջոցով իրականացող ստորոգումը լինում է մասնակի կամ էլ ընդհանրական։ (Ի դեպ, այս փաստը ևս խոսում է անդեմ նախադասությունների մեջ առկա ստորոգման երևույթի մասին)։ Այսպես, երբ որևէ հրաման, հարցում, կոչ (և այլն) ուղղված է որոշակի անձանց, որոնք ներկա են տվյալ խոսքային իրադրության մեջ, ապա այս դեպքում անորոշի արտահայտած հատկանիշն ունի մասնակի բնույթ։ Օրինակ՝ «Իսկ թագաւորն ասէ. «Ոչ ինչ դանդաղել» (Կաղան., 73) և նման այլ նախադասությունների մեջ, ճիշտ է, չի ենթադրվում, թե որոշակիորեն ո՞ւմ է դիմում խոսողը, սակայն նկատելի է, որ դրանք միայն այն մարդիկ են, որոնք տվյալ պահին կարող էին թագավորի ունկնդիրը լինել։ Իսկ այն դեպքում, երբ խոսողի կողմից արտահայտված հրամանը, հարցումը, տարակուսանքը (և այլն) վերաբերում է ոչ թե ինչ-որ անձանց, այլ բոլորին՝ ընդհանրապես, այս դեպքում տվյալ նախադասությունն ունի հաղորդակցման ընդհանրական արժեք։ Այսպես՝ «Անարատ պահել զանձն յաշխարհէ» (Սարգիս, 71) և այս տիպի բազմաթիվ այլ նախադասությունների գլխավոր անդամի արտահայտած հատկանիշի համար որպես ենթակա են ենթադրվում բոլորն ընդհանրապես։ Հենց այն փաստը, որ մարդկանցից բացի ուրիշ ոչ մի առարկա կամ արարած այս նախադասությունների մեջ չի կարող ենթադրվել որպես գործողության տեր, խոսում է այն մասին, որ այստեղ ստորոգումը կրում է տարբերակված բնույթ։ Այս առումով բայական անդեմ նախադասություններն առնչության եզրեր ունեն ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների հետ։ Այսպես, եթե համեմատելու լինենք «Ցամենայն աղտեղութեանց սուրբ լինել» (Սարգիս, 543) և «Տուք արքեցուքիւն տրտմելոց և զինի ըմպել ցաւագնոտաց» (Առակ ԼԱ, 6)11 նախադասությունները, ապա սրանց բովանդակության պլաններում կնկատենք զգալի նույնություններ՝ ա) և՛ առաջին, և՛ երկրորդ նախադասությունները կառուցվածքով միակազմ են, բ) երկուսի մեջ էլ ենթադրվում է անձ ցույց տվող ենթակա, գ) երկուսի մեջ էլ որպես ենթակա ենթադրվում են բոլոր անձերն՝ ընդհանրապես, դ) երկուսի մեջ էլ ստորոգումն ունի ընդհանուր, չտարբերակված բը-

---

7 Նույն տեղում։

8 Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 369։

9 Հ. Հարությունյան, Անդեմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1970, էջ 15։

10 Ս. Գյուլբուդաղյան, Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967, էջ 29։

11 Ասսվածաշնչյան այս և հետագա օրինակները բերված են Վենետիկի 1860 թ. հրատարակությունից։

նույթ, ե) երկուսի մեջ էլ (հատկապես՝ առաջինի) Գր. Ղափանցյանի խոսքերով ասած, «գործողությունը ոչ թե տրամաբանական ակցիա է, այլ ավելի շուտ կամային-զգացական արտահայտություն»[12]։ Ընդգծված նախադասությունների միջև հիմնական տարբերությունն ի հայտ է գալիս դրանց արտահայտության պլաններում։ Այդ տարբերությունը գլխավոր անդամների արտահայտման ձևն է (առաջինի մեջ անդեմ բայ է, երկրորդի մեջ՝ դիմավոր)։ Կախված արտահայտության պլանից՝ անդեմ նախադասությունների մեջ ոչ միայն «գործողությունն է... անորոշ, այլև ժամանակը, եղանակը, թիվը, դեմքը»[13]։ Բացի այդ, ի տարբերություն ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասության գլխավոր անդամի, որը խոսքային մեկ այլ իրողության մեջ կարող է ունենալ իր որոշակի ենթական [(հմմտ. «Արդ՝ տես զինչ պատմէ Միքիայն շնորհ հոգւոյն մարգարէութեան» (Ագաթ., 193) և «Տես դու, Գրիգորիոս, զի ոչ փրկեաց զքեզ սնոտի յոյսն քո» (Ագաթ., 67)], բայական անդեմ նախադասության գլխավոր անդամը զուրկ է նման հնարավորությունից. այն որպես գլխավոր անդամ հանդես է գալիս բացառապես միակազմ նախադասությունների մեջ։

«Աստվածաշնչում» հանդիպում են մի շարք նախադասություններ, որոնց գլխավոր անդամը դիմավոր բայի փոխարեն արտահայտված է անդեմ բայաձևով։ Այսպես՝ «Սիրելի՛ք, մի՛ օտարոտի համարիլ զեռանդն ինչ, որ ի փորձութիւն ձեզ լինիցի» (Ա. Պետր., Դ 12) կառույցի ընդգծված նախադասությունը միակազմ է, քանի որ բայական անդամի դիմավոր լինելու դեպքում ևս այն պետք է համարվեր միակազմ (հմմտ. «Սիրելի՛ք, մի՛ օտարոտի համարեցէք զեռանդն ինչ...»)։ Միևնույն կերպ են արժեքավորվում նաև հետևյալ նախադասությունները՝ «Մի՛ բազում վարդապետս լինել, եղբա՛ր իմ» (Յակ., Գ, 1), «Այլ ասեմ ձեզ. Ամենեկին մի՛ երդնուլ. մի՛ յերկինս, զի աթոռ է Աստուծոյ և մի՛ յերկիր, զի պատուանդան է ոտից նորա» (Մատթ., ե, 34—35), «Ահաւասիկ, ուսուցանեմ ինչ (ընդգծված բառն ընդհանրական արժեք ունի—Գ. Խ.) զբանս ճշմարիտս և զգիտութիւն՝ հնազանդ լինել պատասխանի տալոյ զբանս ճշմարտութեան...» (Առակ., ԻԲ, 21)և այլն։ Նկատելի է, որ այս տիպի միակազմ նախադասությունների կիրառության ոլորտն ուղղակի խոսքն է։ Սրանք, փաստորեն, ընդհանրական- դիմավոր միակազմ նախադասությունների ընդհանրական-անդեմ տարբերակներն են։

Բայական անդեմ նախադասությունները նկատելի աղերսներ ունեն նաև այլ տիպի միակազմ նախադասությունների հետ։ Դրանք այն նախադասություններն են, որոնց գլխավոր անդամի բաղադրիչներից մեկն անպայմանորեն անորոշ դերբայն է, որն էլ տվյալ կառույցների հիմնական իմաստակիր միավորն է։ Այսպես, համեմատելով բայական անդեմ [«Իմանալ զբանս ճանաչարոյ» (Կոր., 50)] նախադասությունը՝ ա) ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅ+ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ [«Նոյնպէս և վասն նշմարիտ Հոգւոյն է իմանալ յասելոյն, թէ «ելանէ և ոչ բաժանի» (Ագաթ., 367)], բ) ԱՆԴ+ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅ+ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ [«Եւ այլ անդ է իմանալ դարձեալ, զի կէսքն ունէին թակարդս և արտգաւզս» (ՄԽԳՊ, 381)], գ) ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՍԵՌԱԿԱՆ+ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅ+ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ [«Մաաց առաաց է իմանալ զօրէնս» (Առակ., Թ, 10)], դ) ԵՂԱՆԱԿԻՉ ԲԱՌ+ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅ+ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ կամ ԵՂԱՆԱԿԻՉ ԲԱՅ+ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ[«Զմարդին պառաւել արժան է ի չարէ արարչէ իմանալ» (Եղն., 146)], ե) ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ+ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅ [«Ոչ պատճառս վնասուն ի բժշկէն իմանալի է, այլ ի թշնամւոյն» (Եղն.,48)] կաղապարներով արտահայտվող նախադասությունների հետ (խոսքն ընդգծվածների մասին է), նկատում ենք, որ համեմատվող բոլոր նախադասությունների իմաստակիր անդամն անդեմ բայ է՝ արտահայտված անորոշ կամ ապառնի դերբայով, սակայն եթե բայական անդեմ նախադասության մեջ արտահայտվում է գործողության կատարման ընդհանուր գաղափար, ապա մյուսների մեջ այդ ընդհանուր գաղափարն արձանագրվում է միադիմի բայաձևի միջոցով. ընդ որում, խոսողը մասնավորեցնում, եղանակավորում կամ հավաստում-հաստատում է այդ նախադասությունների մեջ արտահայտված գործողությունը։

Ասացական բայերով արտահայտված որոշ կառույցների մեջ գործածված անորոշ դերբայն իր լրացումներով պետք է դիտել ոչ թե անդեմ նախադասություն, այլ՝ դերբայական դարձված, որը կատարում է նպատակի պարագայի գործառույթ։ Այսպես է, օրինակ, հետևյալ նախադասության մեջ՝ «Եւ աղաղակեաց թագաւորն զօրութեամբ՝ ածել զմոգս և զքաղդեայս և զգէտս» (Դան., ե, 7)։ Այս տիպի նախադասությունների միայն կետադրությունը փոխելով՝ արդյունքում կունենանք միակազմ ստորադաս նախադասություն։ Այսպես, մեր կողմից կե-

12 Գր. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Լեզվաբանության ներածություն, հ. 1, Երևան, 1939, էջ 173։
13 Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 75։

տարբերական փոփոխության ենթարկված «ես ետ հրաման Հոգոփեռնէս ծառայից իւրոց, որ կային առաջի նորա. «Ունե՛լ, կապե՛լ, զԱքիոր և տանե՛լ զնա ի Բետիղուա» նախադասությունը բնագրում ունի հետևյալ տեսքը՝ «ես ետ հրաման Հոգոփեռնէս ծառայից իւրոց..., ունել կապել զԱքիոր և տանել զնա ի Բետիղուա» (Յուդ., Զ, 7)։

Բայական անդեմ նախադասությունների մեջ կարող է արտահայտվել հրաման, պատվիրան, խորհուրդ, կոչ, հորդոր, հարցում, առաջարկություն և այլն. և չնայած բայական անդեմ նախադասությունների արտահայտության պլանում բացառվում է բայական եղանակիչի առկայությունը, այնուամենայնիվ պետք է ասել, որ խոսողը արտահայտվող գործողության նկատմամբ անպայման ունենում է իր որևէ զգացումը, որևէ վերաբերմունքը։ Հրամանի, կոչի, հարցման և այլնի միջոցով խոսողն արտահայտում է գործողության կատարման անհրաժեշտություն, կարելիություն, անկարելիություն, պարտադրանք, ցանկություն, կամք, ձգտում և այլն։ Օրինակ՝ «Երկրորդ՝ զարհուցանել ի ձեզ զժառանգութիւնս ձեր» (ՄԽՊՀ, 318), «Մի՛ ինչ առնել աչառանօք» (Ա. Տիմ., Ե, 21)։ «Ներել միմեանց. շնորհել իրեարց, եթէ ուրուք զումեքէ տրտունջ ինչ իցէ» (Կորնթ., Ե, 13), «ես մի՛ ելանել ի մուրոյն տառապանս, և մի՛ բնաւ ելանել ըստ իւրամանչիւր զուարա» (Բուզ., 64), «ես յայտ իսկ էր ի հրամանէ Աստուծոյ՝ անդ միայն իշխել մատուցանել նմա զողջակէզսն պատարագաց, ուր բնակեալ էր Աստուած՝ ի մէջ մարդկան» (Ագաթ., 162—163), «Մի՛ շար փոխանակ շարի հատուցանել կամ բամբասանս՝ ընդ բամբասանաց, այլ զնորին հակառակն՝ օրհնե՛լ» (Ա. Պետր., Գ, 9), «Զի բան յերկոցունց վերայ կայ. ասէ. «Ո՛չ ուտել միս և ո՛չ ըմպել գինի» (Եղն., 285), «Արդ՝ առաջին է հնազանդութիւն—լսել երկիւղիւ զբանս Աստուծոյ, զոր ընդ մեծ բարեգործութիւնս յարգեցուցանէ նա» (Անձևացի, 9), «Քաջալերեալք հասանիցեմք ի բարեացն կատարումն ի նշանակեալ նպատակն երանելոյն Պօղոսի, եթէ «Միաբան հասանել ի չափ հասակին Քրիստոսի» (Կոր., 82) և այլն։

Գրաբարի բայական անդեմ նախադասությունների մեջ (քանի որ դրանց գլխավոր անդամն արտահայտության պլանում անդեմ բայ է) արտահայտվում է գործողության կատարման ոչ կոնկրետ ժամանակ։ Սովորաբար այս տիպի նախադասություններում արտահայտվում է կատարելի գործողության դաղափար[14], որի մեջ ինչ-որ չափով զգացվում է նաև ներկա ժամանակի նրբերանգ, սակայն շատ հաճախ հանդիպում են նախադասություններ, որոնց մեջ արտահայտվում է «ընդհանրական ժամանակի»[16] դաղափար։ Օրինակ՝ «Ստարասէ՛րք լինել ընդ միմեանս առանց տրտնջելոյ» (Ա. Պետր., Գ, 9), «եղ կրօնս Պիթագորաս՝ «Զշնչաւորաց միս չճաշակել և ի գինւոյ ժուժկալել» (Եղն., 142) և այլն։

Գրաբարում հազվադեպ են հանդիպում բայական անդեմ նախադասություններ՝ անկախ կիրառությամբ։ Օրինակ՝ «Մի՛ բաղում վարդապետս լինել, եղբա՛ր իմ» (Յակ., Գ, 1), «Ստարասէ՛րք լինել ընդ միմեանս առանց տրտնջելոյ» (Ա. Պետր., Գ, 9)։ Ընդ որում սրանք լինում են ընդարձակ։ Սովորաբար անդեմ նախադասությունները գործածվում են բարդ կառույցների մեջ, որտեղ շարադասությամբ կարող են լինել և՛ նախադաս [«Խնդա՛լ ընդ խընդացողս, լա՛լ ընդ լացողս. զնոյն միմեանց խորհիջիք. մի՛ ամբարտաւանէք, այլ ընդ խոնարհս զիջանիցիք» (Հռոմ., ԺԲ, 15)], և՛ միջադաս [«Արդ՝ մարդոյն եղաւ փոքր պատուէ—ի ծառայն չնաշակել, զի այնու ի մեծ պատիւ ձգեալ հասցէ» (Ագաթ., 145)], և՛ վերջադաս [«ես ասէ. «Հապա վազվաղակի գինի և նաշիհ և զինչ պիտի յուրախութեան հանդերձ՝ Հրէիցն մատուցանել զնօրն օր» (Գ. Մակ., Զ, 21)]։

Ինչպես իրավացիորեն նկատում է Ս. Աբրահամյանը, «Մեկից ավելի գլխավոր անդամ ունեցող անդեմ նախադասությունը կարելի է համարել բարդ համադասական անդեմ նախադասություն»[16]։ Օրինակ՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել զգուշութիւն բանից և միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ և ուղղել զիրաւունս» (Առակ., Ա, 2—3), «Երբև զազատս լինել և մի իբրև պատրուակ չարութեան ունել զազատութիւնն, այլ իբրև Աստուծոյ ծառայք» (Ա. Պետր., Բ, 16) և այլն։

---

14 Անդրադառնալով ժամանակակից հայերենի անդեմ նախադասություններին, Ս. Գյուլբուդաղյանը բերում է նաև «կատարվող գործողության դաղափար» արտահայտող անդեմ նախադասության օրինակներ (տե՛ս Ս. Գ յ ո ւ լ բ ո ւ դ ա ղ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 128), որպիսիք գրաբարում չեն հանդիպում։

15 Գ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 276։

16 Ս. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962, էջ 137։

Ս. Աբրահամյանն իրավացի է նաև այս հարցի շուրջ արած մեկ այլ դիտողության մեջ։ «Բարդ ստորադասական անդեմ նախադասություններ չեն լինում,— գրում է լեզվաբանը,— քանի որ ստորադասական կառուցվածքի մեջ կարևոր դեր են կատարում այնպիսի քերականական կատեգորիաներ, ինչպիսիք են դեմքը և թիվը, որոնք, սակայն, բացակայում են անդեմ նախադասությունների մեջ»[17]։ Հարկ ենք համարում ավելացնել, որ բարդ կառույցների մեջ (երկկազմ նախադասությունների հարևանությամբ) հանդես եկող բայական անդեմ նախադասությունները կարող են լինել և՛ գերադաս [«եւ ի լուսնոյ վեր զամենայն, ինչ որ է, անմահ նստմարեալ» (Եղն., 142)], և՛ ստորադաս [«եւ ասէ. «Զիմ տեսիլդ մի ումեք յայտնեսցես» (Կաղան., 73)]։

Բայական անդեմ նախադասություններից գրաբարում առավել հաճախ հանդիպում են շեշտված-հրամայական բնույթի նախադասություններ։ Վ. Առաքելյանը գտնում է, որ անորոշ դերբայի միջոցով արտահայտվող հրամանն «ավելի կտրուկ է, աեռարկելի (ընդգծումը մերն է.— Գ. Խ.), քան դիմավոր բայով արտահայտված հրամայականը...»[18]։ Դա, իրո՞ք, այդպես է, քանի որ անորոշ դերբայի միջոցով արտահայտվող հրամանն ընդհանրական բնույթ է կրում։ Եվ որովհետև այն չի վերաբերում որոշակի անձի (կամ անձերի), այդ պատճառով էլ մնում է անառարկելի։ Առավել սակավ գրաբարյան աղբյուրներում հանդիպում են բացականչական-ցանկական և հարցական բնույթի բայական անդեմ նախադասություններ։ Օրինակ՝ «Զի՞նչ ունիս և կամ զի՞նչ եգեր ի մտի—լինե՞լ կցորդ կենաց իմոց, ...երէ մեռանել տարապարտուց ի տարապարտ խորհուրդս ընդունայնութեան մտացդ, ուր կասդ իսկ» (Ագաթ., 61)։

Ըստ գործողության կատարման և իրականության միջև եղած հարաբերության՝ բայական անդեմ նախադասությունները լինում են հաստատական [«Ցայր երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան. նախ՝ սիրել զԱստուածուրիւնն յամենայն սրտէ և յամենայն անձնէ և յամենայն զօրութեամբ, որ է առաջին» (Ագաթ., 320) և այլն] և ժխտական [«Առաջին՝ շիշլ զնանցանս ծեր» (ՄԽՊՀ, 318)], «Մի ճայել, ասէ, յաստապելս և ի տոհմաթիւս» (Ոսկ., 7)]։ Նկատելի է, որ բայական անդեմ նախադասությունների մեջ ժխտման գաղափարն արտահայտվում է ոչ, մի և չ մասնիկների միջոցով, որոնցից առաջինի հետ (որպես թարմատար) հաճախ հանդես է գալիս ինչ անորոշ դերանունը [հմմտ. «Ոչ ինչ դանդաղել» (Կաղան., 73)]։

Հինգերորդ դարի գրաբարում բայական անդեմ նախադասություններ շատ սակավ են գործածվել։ Բավական է նշել, որ մեր ուսումնասիրած լեզվական աղբյուրներում դրանց ընդհանուր թիվը հիսունից չի անցնում։ Այս տիպի նախադասությունների սակավ կիրառությունը պայմանավորված է այդ աղբյուրների թեմատիկ բնույթով։ Դրանց մեծ մասը (եթե հաշվի առնենք նաև «Աստվածաշնչի» որոշ գրքեր) ունեն պատմական բնույթ։ Այստեղ դեպքերը և երկխոսությունները հիշատակվում են նկարագրական միջոցներով։ Բնականաբար, ուղղակի խոսքերի մեծագույն մասը, որ իրականում կտրող էր արտահայտվել անդեմ բայաձևով, հեղինակի կողմից գործածվում է անուղղակի տեսքով. ճիշտ է, նորի՞ց անդեմ բայով, բայց այս դեպքում անդեմ բայը կատարում է նպատակի պարագայի գործառույթ [հմմտ. «Տայր հրաման թագաւորն Տրդատ՝ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց և ի գաւառաց բազմութիւն մատաղ մանկտւոյ ածել յարուեստս դպրութեան և կարգել ի վերայ հաւատարիմ վարդապետաց» (Ագաթ., 437—438) և այլն]։

Ինչ վերաբերում է հետագա դարերին, ապա նկատելի է, որ բայական անդեմ նախադասությունների գործածության հաճախականությունը գնալով ավելանում է։ Ժամանակակից հայերենում, օրինակ, դրանք անհամեմատ մեծ թիվ են կազմում՝ հանդես բերելով արտահայտության և բովանդակության պլանների բազմազանություն[19]։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ.—«Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909։
Անձևացի—Խորոն Անձևացի, Մեկնութիւն աղօթից պատարագին, Վենետիկ, 1869։
Բուզ.—«Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883։
Եղն.—«Եղնիկայ Կողբացւոյ Եղծ ողանդոց», Վենետիկ, 1826։

---

17 Նույն տեղում, էջ 138։

18 Վ. Առաքելյան, Նշվ. աշխ., էջ 40։

19 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Հ. Հարությունյանի նշված աշխատությունը։

Կաղան.—Մովսես Կաղանկատվացի, *Պատմություն Ազվանից աշխարհի*, Երևան, 1983։
Կոր.—Կորյուն, *Վարք Մաշտոցի*, Երևան, 1941։
ՂՓՊՀ—«Ղազարայ Փարպեցւոյ *Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան*», Տփղիս, 1904։
ՄԽԳՊ—«Մովսէսի Խորենացւոյ... *Գիրք պիտոյից*», Վենետիկ, 1796։
ՄԽՊՀ—«Մովսիսի Խորենացւոյ *Պատմութիւն Հայոց*», Տփղիս, 1913։
Ոսկ.—«Հովհաննու Ոսկեբերանի *Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի*», հ. 1, Վենետիկ, 1862։
Սարգիս—«Սարգսի Վարդապետի *Մեկնութիւն եօթանց Թղթոց կաթուղիկեայց*», Կոստանդինուպոլիս, 1828։

ИНФИНИТИВНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ГУРГЕН ХАЧАТРЯН

Резюме

Основной особенностью инфинитивных конструкций является то, что здесь функцию предикативности выполняет интонация. Под подлежащим в этих предложениях могут подразумеваться либо все субъекты вообще, либо субъекты, входящие в данные речевые ситуации. Это означает, что в плане содержания информативных предложений предикативность может носить в одних случаях общий, в других—частный характер. Несмотря на то, что в этих конструкциях исключается наличие модальных глаголов, тем не менее в плане содержания все инфинитивные предложения наделены модальностью.

Употребления инфинитивных предложений в грабаре не часты (в произведениях армянских авторов V в. и в «Библии» их число не превышает пятидесяти).